Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցի նպատակն է առաջին կուրսեցիներին ծանոթացնել Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ), պատմությանը, ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ուսանողների իրավունքներին և պարտականություններին, Քոլեջի ստորաբաժանումներին և նրանց գործունեությանը, ինչպես նաև վեր հանել նրանց կարիքները՝ բարելավումների նպատակով: Ուղեցույցում ներկայացված են նաև ուսումնական գործընթացների (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ), քննություններին և ստուգարքներին պատրաստվելու, ինքնուրույն և անհատական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

ՔՈԼԵՋԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետությունում քիմիական արդյունաբերության զարգացմանը զուգահեռ, քիմիկ-տեխնոլոգներ պատրաստելու պահանջով, 1932 թվականին ինդուստրիալ տեխնիկումում գործող քիմիական մասնագիտության բաժնի բազայի վրա հիմնադրվեց Երևանի քիմիա-տեխնոլոգիական տեխնիկումը, որը 1985 թվականին վերանվանվեց Երևանի պոլիտեխնիկական տեխնիկում, իսկ 2000 թվականին՝ Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ:

Քոլեջն ունի հմուտ, երկարամյա մանկավարժական աշխատանքային փորձ ունեցող դասախոսական կազմ և համալրվում է նոր, երիտասարդ ու բանիմաց մասնագետներով: Քոլեջի ողջ դասախոսական ու վարչական կազմն աշխատում է ժամանակի պահանջներին համահունչ, կազմակերպում արդիական կրթական գործընթաց, պատրաստում որակյալ և մրցունակ մասնագետներ: Դասախոսական անձնակազմը մշտապես մասնակցում է վերապատրաստման գործընթացների: Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջն իրականացնում է նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթություն՝ իր գերխնդիրը համարելով որակյալ կրթության ապահովումը, արդյունավետ ուսումնական, մեթոդական, հետազոտական, դաստիարակչական գործունեության ծավալումը: Քոլեջի բովանդակային, կառուցվածքային և գործառութային բարեփոխումները միտված են Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրերի իրագործմանը:

Քոլեջի նպատակն է ապահովել մասնագետների մրցունակության բարձրացումը աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, նպաստել ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորմանը:

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Լինելով ազգային կրթական համակարգի մի մասնիկ, անհատի մտավոր, քաղաքացիական ու բարոյական որակների ձևավորմանը նպաստող ուսումնական հաստատություն՝ քոլեջի հիմնական առաքելությունն է գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, բարելավել մասնագիտական կրթության որակը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական չափանիշներին, ինչպես նաև նպաստել կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը:

ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջը (այսուհետ՝ Քոլեջ).

- Ձգտում է զարգացնել իր գերակա ուղղությունները և մրցակցային առավելությունները, ինտեգրել ժամանակակից կրթության առանձնահատուկ մոտեցումները:
- Ձգտում է լինել հասանելի, մատչելի և նախընտրելի միջին և նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն՝ հասարակության ամենատարբեր շերտերի համար՝ անկախ տարիքից, սեռից, ռասսայական ու ազգային պատկանելությունից, համոզմունքներից և քաղաքական նախասիրություններից:
- Ունի գործուն, արդյունավետ կառավարում, վարչարարություն, ուսումնական բազա, որը նպաստում է կրթության որակի անընդհատ ու շարունակական բարելավմանը:

ՔՈԼԵՋԻ ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր միջին և նախնական մասնագիտական ուսումնական հաստատության բնութագրական առանձնահատկությունը որոշվում է այն արժեքներով, որոնց դավանում է տվյալ կրթական հաստատությունը: Քոլեջի համար այդ արժեքները այն հիմնարար սկզբունքներն են, որոնք դրված են նրա գործունեության հիմքում.

- մատչելի և ուսանողակենտրոն կրթություն,
- կրթական միջավայրի շարունակական բարելավում,
- կրթության գործընթացում ակադեմիական ազնվություն,
- շահառուների հետ արդյունավետ համագործակցություն:

ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Քոլեջի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և Քոլեջի կանոնադրությանը համապատասխան:

Քոլեջի կառավարման բարձրագույն մարմինը կառավարման խորհուրդն է, որն ունի Քոլեջի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Քոլեջում ապահովվում է կրթական գործընթացի կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությունը ու նրանց ընդգրկվածությունը կառավարման գործընթացին՝ որպես համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման երաշխիք:

ՔՈԼԵՋԻ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոլեջի տնօրինական խորհուրդը՝ Քոլեջի տնօրենի նախագահությամբ, գործող մարմին է, որը լուծում է Քոլեջի գործունեության պլանավորման, կազմակերպման, և կառավարման հիմնահարցերը: Քոլեջի Տնօրինական խորհրդի կազմում ընդգրկված են տնօրենի տեղակալները, ստորաբաժանումների ղեկավարները: Տնօրինական խորհրդի նիստերին, կախված հարցի բովանդակությունից, կարող են մասնակցել նաև ուսանողական համակարգի ներկայացուցիչներ:

ՔՈԼԵՋԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Քոլեջի մանկավարժական խորհուրդը ինքնուրույն մարմին է, որը ղեկավարում է տնօրենը, գործում է Քոլեջի կանոնակարգով սահմանված լիազորությունների սահմաններում, քննարկում է Քոլեջի գործունեությանը վերաբերող ուսումնական և դաստիարակչական հարցեր:

ՔՈԼԵՋԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներն են Տնօրինական և Մանկավարժական խորհուրդները, ուսումնական մասը, մասնագիտական ամբիոնները, կադրերի բաժինը, պրակտիկայի բաժինը, կարիերայի կենտրոնը, հաշվապահությունը, գրադարանը, արխիվը, բուժկետը, ՔՊ շտաբը:

ՔՈԼԵՋՈՒՄ ԱՌԿԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ			
Մասնագիտությունը	**Որակավորումը**	**Կրթության հիմքը**	**Ուսման տևողությունը**
Դեղագործություն	Դեղագործ	Հիմնական	3
		Միջնակարգ	2
Ատամնատեխնիկական գործ	Ատամնատեխնիկ	Հիմնական	3
		Միջնակարգ	2

Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	Դիմահարդար-կոսմետոլոգ	Հիմնական	3
		Միջնակարգ	2
Հաշվապահական հաշվառում	Հաշվապահ	Հիմնական	3
		Միջնակարգ	2
Սպասարկման կազմակերպում	Մենեջեր՝ սպասարկման ոլորտի	Հիմնական	3
		Միջնակարգ	2
Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում	Տեխնիկ-փորձագետ՝ պարենային ապրանքների ստանդարտացման և համապատասխանության հավաստագրման	Հիմնական	3
		Միջնակարգ	2
Զբոսաշրջություն	Մասնագետ՝ զբոսաշրջային ծառայությունների	Հիմնական	3
		Միջնակարգ	2
Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում	Տեխնիկ-էկոլոգ՝ շրջակա միջավայրի պահպանման և բնական պաշարների արդյունավետ օգտագործման	Հիմնական	3
		Հիմնական	2
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	Տեխնիկ-ծրագրավորող	Հիմնական	3
		Միջնակարգ	2
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ			
Ոսկերչություն	Ոսկերիչ	Հիմնական	3
		Միջնակարգ	1

Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում	Լաբորանտ՝ քիմիական անալիզի	Հիմնական	3
		Միջնակարգ	1
Խոհարարական գործ	Խոհարար	Հիմնական	3
		Միջնակարգ	1
Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա	Էլեկտրաեռակցող	Հիմնական	3
		Միջնակարգ	1
Կարի արտադրության տեխնոլոգիա		Միջնակարգ	1
Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում		Միջնակարգ	1

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջի ուսանողական խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/ ձևավորում է Քոլեջի ուսանողական համակազմի ներկայացուցիչներից՝ ընտրության կարգով:

Խորհրդի ղեկավար մարմինը նախագահն է, կառուցվածքային ստորաբաժանումները՝ հանձնաժողովները: Խորհրդի նիստերը գումարվում են կիսամյակում առնվազն երկու անգամ, սակայն կարող են արտահերթ ժողովներ հրավիրվել՝ ըստ անհրաժեշտության: Խորհուրդը ծանոթնում է գործող կանոնակարգին, կազմում է գործունեության տարեկան աշխատանքային պլան և ներկայացնում հաստատման: Լսում և քննարկում է Խորհրդի նախագահի և հանձնաժողովների հաշվետվությունները, քննարկում է Խորհրդին առնչվող այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ:

Ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է փակ գաղտնի քվեարկությամբ (եթե այդ մասին այլ որոշում չի կայացվում): Նախագահի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է Խորհրդի անդամների երկու երրորդը:

Ընտրվում են նաև խորհրդի փոխնախագահ, քարտուղար և հանձնաժողովների նախագահներ:

Պ Ր Ա Կ Տ Ի Կ Ա Ն Ե Ր

Ուսումնական գործընթացի կարևորագույն մաս են կազմում պրակտիկաները, որոնք ուսանողները, ըստ մասնագիտությունների անց են կացնում համապատասխան կազմակերպություններում: Պրակտիկայի բովանդակությունն ու տևողությունը սահմանվում են Քոլեջի ուսումնական պլաններով: Պրակտիկայի կազմակերպումն ուղղված է ուսանողների առկա հմտությունների կատարելագործմանը:

Քոլեջում գործում են պրակտիկայի հետևյալ տեսակները.

1. **Ուսումնական:** Ուսումնական պրակտիկայի հիմնական նպատակն է յուրացված տեսական գիտելիքների ամրապնդումը, ուսանողների հմտությունների և կարողությունների ձեռքբերումը:
2. **Արտադրական:** Արտադրական պրակտիկաների հիմնական նպատակն է ուսանողների մոտ գործնական աշխատանքների հիման վրա մասնագիտական հմտությունների ձևավորումը:
3. **Նախաավարտական:** Նախաավարտական պրակտիկան, որպես հիմնական կրթական ծրագրի բաղադրիչ, հանդիսանում է ուսանողի ուսուցման վերջնական փուլ և իրականացվում է տեսական ու պրակտիկ ծրագրերի յուրացումից հետո:

Քոլեջում գործող ուսումնական պլանների համաձայն պրակտիկաները կարող են իրականացվել՝

- ուսումնական լաբորատորիաներում,
- տարբեր կազմակերպություններում:

Պրակտիկաներին պետք է վերաբերվել ամենայն պատասխանատվությամբ, քանի որ դրանց ընթացքում ձեռք բերած գործնական հմտություններն անհրաժեշտ են որակյալ մասնագիտացում ստանալու համար:

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համաձայն գործող կանոնակարգի՝ Քոլեջի յուրաքանչյուր առարկայական և մոդուլային դասընթաց ավարտվում է պարտադիր գնահատմամբ՝ քննական կամ կիսամյակային գնահատում, որոնց անցկացման ընթացքում բացահայտվում է ուսանողի կողմից յուրացված գիտելիքի աստիճանը:

ՀՈՒՇՈՒՄ

- Եթե վերցրել եք այնպիսի տոմս, որի հարցերին պատասխանելը որոշակի դժվարություններ է պարունակում, մի շտապեք փոխել տոմսը, (քանզի փոխելով տոմսը դուք կորցնում եք միավոր). նախ՝ փորձե՛ք հիշել այն, ինչ գիտեք այդ տոմսի հարցերի վերաբերյալ:
- Պատասխանե՛ք միայն բուն հարցին: Մի՛ փորձեք ցույց տալ Ձեր տեղեկացվածության աստիճանը՝ խոսելով այլ ոլորտներին առնչվող թեմաներից, քանի որ կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե տվյալ հարցին լավ չեք պատրաստված: Դրանով կարող եք դասախոսին դրդել, որ Ձեզ մի շարք լրացուցիչ հարցեր տա, ինչը կարող է և Ձեր օգտին չլինել:
- Մի՛ փորձեք խոսքի տեմպի արագացման միջոցով պատմել ավելին: Սակայն պետք չէ նաև շատ դանդաղ խոսել:
- Ուշադրություն դարձրե՛ք դասախոսի բոլոր հարցերին և դիտողություններին, քանի որ դասախոսը գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար կարող է հուշել հարցի վերաբերյալ իր տեսակետը, ինչն էլ կարող եք պատասխանելու ընթացքում օգտագործել:
- Մի՛ վախեցեք լրացուցիչ հարցերից, քանի որ դրանք դասախոսը հաճախ օգտագործում է որպես Ձեզ օգնելու միջոց:

Հարգելի՛ ուսանող, ուսանողի գիտելիքների ստուգումն ու գնահատումը իրականացվում է «Ուսանողի գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» կարգի համաձայն, որը տեղադրված է www.eptq.am պաշտոնական կայքի «Փաստաթղթեր» բաժնում: